ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

25.11.2022Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:
2. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:
3. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2021-2022թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփումը: Նշվեց, որ I ընթացիկ քննությունները և ստուգումները իրականացվել են նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները և տարաձայնություններ չեն եղել: 2022-2023 ուստարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփումը ներկայացված է կից՝ ***Հավելված 2***-ում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-23 ուստարվա առաջին կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Նա նշեց, որ անհատական բեռնվածությամբ նախատեսված ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, իսկ ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են հետաքրքրություն: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր ղեկավար, ամսվա մեջ որոշակի գրաֆիկով, կոնսուլտացիոն հանդիպումներ են ունենում ուսանողների հետ՝ ամբիոնի կողմից հաստատված ժամանակացույցով: Զեկուցողը նաև ավելացրեց, որ ավարտական աշխատանքների գործնականում կատարման ընթացիկ վիճակը մի փոքր մտահոգիչ է, քանի որ նոյեմբեր ամսվա վերջին ավարտական աշխատանքները դեռևս գտնվում են հետազոտական վիճակում:

Զեկուցողը նաև հավելեց, որ ավարտական աշխատանքների հետազոտական մասի իրականացմանը զգալիորեն նպաստում է մասնագիտական պրակտիկան, որի ընթացքում ուսանողները ավարտական աշխատանքի ոլորտային շրջանակներում իրականացնում են հետազոտական աշխատանք և հիմնավորում նախագծի գործնական նշանակությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների ղեկավար դասախոսները և վստահեցրին, որ հնարավորինս հետևողական կլինեն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ մասնաճյուղի կարևոր խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին բավարարող, բարձր որակավորում ունեցող շրջանավարտներ տալը: Կրթական իր գործունեության ընթացքում մասնաճյուղը մշտապես կարևորել է իր արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները՝ դրանք հավաքագրելով ամենամյա իրականացվող հարցուների միջոցով: 2011 թ.-ից իրականացվող այդ հարցումները թույլ են տալիս ժամանակին ու պատշաճ արձագանքել գործատուների պահանջներին: Նշենք, որ վերջին 5 տարիներին հարցումն իրականացվում է առցանց, անանուն, հարցմանը մասնակցում են մարզի գործատու կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները: 2022 թ.-ին իրականացված հերթական ուսումնասիրության համար էլեկտրոնային հարցաթերթ ուղարկվել է 137 գործատուների, արձագանքել են ընդամենը 73-ը (53%-ը):

Ուսումնասիրության նպատակն է եղել պարզել արտաքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ: 5-բալային սանդղակով գործատուները գնահատել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, կազմակերպչական ու հաղորդակցական կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման դրսևորումը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները և այլն:

Ճիշտ է, առանձին կրթական ծրագրերի համար առանձնացված չեն վերլուծություններ, սակայն, կարելի է ասել, որ հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են, ինչը փաստում է, որ մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ: Կարևոր է նշել նաև

այն փաստը, որ հարցման մասնակիցների քանակը վերջին տարիներին ավելացել է, ինչը վկայում է, որ նրանք շահագրգռված են մասնաճյուղի կրթական գործունեությամբ /Հարցման վերլուծությունը տե՛ս ***Հավելված 1***-ում/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ, դոցենտ Մ. Ստեփանյանը , ՀՆՄ անդամ, դոցենտ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2021-2022թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ հարցման արդյունքներն ընդունել ի գիտություն:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական հմտությունների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության՝ 2021-2022 թթ. հարցման արդյունքների և 2019-2021 թթ. հարցման արդյունքների համեմատական

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(2021-2022 ուստարի)

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կարևոր խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին բավարարող, բարձր որակավորում ունեցող շրջանավարտներ տալը: Կրթական իր գործունեության ընթացքում Մասնաճյուղը մշտապես կարևորել է իր արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները՝ դրանք հավաքագրելով ամենամյա իրականացվող հարցուների միջոցով: 2011 թ.-ից իրականացվող այդ հարցումները թույլ են տալիս ժամանակին ու պատշաճ արձագանքել գործատուների պահանջներին: Նշենք, որ վերջին 5 տարիներին հարցումն իրականացվում է առցանց, անանուն, հարցմանը մասնակցում են մարզի գործատու կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները: 2022 թ.-ին իրականացված հերթական ուսումնասիրության համար էլեկտրոնային հարցաթերթ ուղարկվել է 137 գործատուների, արձագանքել են ընդամենը 73-ը (53%-ը):

Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտաքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ: 5-բալային սանդղակով գործատուները գնահատել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, կազմակերպչական ու հաղորդակցական կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման դրսևորումը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները և այլն:

Հարցման արդյունքները վերջնական ամփոփվել են 2022 թ.-ի նոյեմբերին: Մասնաճյուղի արտաքին կապերի բաժնում իրականացվել է հավաքագրված

տվյալների մշակում, արդյունքների վերլուծություն, կատարվել է նաև նախորդ տարիների նույն հարցման արդյունքների հետ համեմատական վերլուծություն։

Հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են, ինչը փաստում է, որ մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ։ Կարևոր է նշել նաև այն փաստը, որ հարցման մասնակիցների քանակը վերջին տարիներին ավելացել է, ինչը վկայում է, որ նրանք շահագրգռված են Մասնաճյուղի կրթական գործունեությամբ։

Ներկայացնենք տարբեր տարիներին հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը.

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը	**2019թ.**	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**
	50	69	70	73

Հարցման մասնակիցները մասնավորապես գնահատել են մեր շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը, տեսական գիտելիքների իմացությունը, գործնական հմտությունները և մասնագիտական խոսքը։ Հարկ է նշել, որ վերջին 3 տարիների համեմատ շահակիցների տված գնահատականների միջինը էական չի փոփոխվել։

Թիվ	**Շրջանավարտների**	**Միջին գնահատական**			
		2019թ.	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**
1	Մասնագիտական պատրաստվածությունը	4.00	4.01	3.97	**3.94**
2	Տեսական գիտելիքների իմացությունը	4.03	4.10	4.00	**4.02**
3	Գործնական հմտությունները	3.08	3.87	3.71	**3.71**
8	Մասնագիտական խոսքը	4.00	4.04	3.79	**3.87**

Օրինակ, մեր շրջանավարտների տեսական գիտելիքների իմացությանը **4 և 5 գնահատականներ** են տվել հարցմանը մասնակցած 73 շահակիցներից **57-ը** (78.1%-ը), որը մյուս որակների համեմատ բարձր ցուցանիշն է, մասնագիտական պատրաստվածությանը՝ **56-ը** (76.7%-ը), սակայն պետք է նշել, որ մեր

շրջանավարտների գործնական հմտություններն (միջին գնահատականը՝ 3.71) և մասնագիտական խոսքը (միջին գնահատականը՝ 3.87) համեմատաբար ցածր են գնահատվել մեր շահակիցների կողմից:

Թիվ	Շրջանավարտների	Գնահատական				4 և 5	
		5	4	3	2	քան.	%
1	Մասնագիտական պատրաստվածությունը	15	41	15	2	56	76.7%
2	Տեսական գիտելիքների իմացությունը	18	39	16	0	57	78.1%
3	Գործնական հմտությունները	17	27	24	3	44	60.3%
8	Մասնագիտական խոսքը	18	30	20	5	48	65.8%

Առաջարկում ենք ամբիոններում քննարկել այս արդյունքները, մշակել մոտեցումներ առանձնապես ուսանողների գործնական կարողությունների և մասնագիտական խոսքի զարգացման ուղղությամբ:

Հարցման շրջանակներում փորձել ենք պարզել, թե մեր շրջանավարտների մոտ որքան է բարձր ինքնադրսևորվելու կարողությունները, մասնավորապես որքան է նրանց մոտ զարգացած հաղորդակցվելու, կազմակերպչական, քննադատական-վերլուծական և տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները:

Թիվ	Շրջանավարտների.	Միջին գնահատական			
		2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
4	Հաղորդակցվելու կարողությունները	4.2	4.2	4.2	**4.05**
5	Կազմակերպչական կարողությունները	4.10	4.13	4.13	**4.10**
6	Քննադատական – վերլուծական կարողությունները	3.90	3.75	3.61	**3.79**
7	Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	3.90	3.90	3.76	**3.84**

Ներկայացված տվյալներից ակնհայտ է դառնում, որ հաղորդակցվելու(միջին գնահատականը՝ 4.05) և կազմակերպչական որակների (միջին գնահատականը՝ 4,10) համար 2022 թ.-ի հարցման արդյունքները նախորդ տարիների համեմատ նվազել են ընդամենը 0.15 և 0.03 միավորով համապատասխանաբար:Իսկ ինչ վերաբերում է քննադատական-վերլուծական և տարբեր իրավիճակներում արագ և

ճիշտ կողմնորոշվելու կարողություններին, նախորդ տարվա համեմատ այս տարվա արդյունքներն աճել են։ Այստեղ միջին գնահատականը ձևավորվել է հարցման մասնակիցների նշված որակներին տված 4 և 5 գնահատականների գերակշռությամբ։ Մասնավորապես, 73 գործատուներից 45-ը (61.7%-ը) մեր շրջանավարտների քննադատական-վերլուծական կարողությունները գնահատել է 4 և 5 գնահատականներով, 48-ը (65.7%-ը) գտնում է, որ մեր շրջանավարտները կարողանում արագ և ճիշտ կողմնորոշվել տարբեր գործնական իրավիճակներում։

Այս գնահատականները բավականին գոհացնող են, սակայն կարելի է ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսումնառության կազմակերպման ձևերին ու մեթոդներին, որպեսզի նպաստենք մեր ուսանողների մոտ քննադատական-վերլուծական կարողությունների զարգացմանը։

Այստեղ հավելենք, որ մեր 2023 թ.-ի և հաջորդ տարիների շրջանավարտների մոտ ակնկալում ենք, որ գործնական միջավայրում տեսանելի կարտահայտվեն նրանց ձեռք բերած վերլուծական և հետազոտական կարողությունները, ինչը պայմանավորված կլինի կրթական գործընթացում ներդրված նոր մոտեցմամբ՝ հետազոտական աշխատանքների իրականացմամբ։

Ներկայացնենք հարցման մասնակիցների տված գնահատականները մեր շրջանավարտների դրսևորած ընդհանրական կարողությունների վերաբերյալ և նշենք, որ այս անձնային և մարդկային որակներին տրված միջին գնահատականները նախորդ ցուցանիշների համեմատ էապես բարձր են և գերազանցում են 4-ին (մասնավորապես, վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերի միջին գնահատականը 4.12 է , իսկ աշխատանքային պատասխանատվությանը՝ 4.13)։ Ըստ արդյունքների՝ նկատելի է, որ մեր շրջանավարտների թիմային աշխատելու ունակությունների միջին գնահատականը (3.97)՝ նվազել է նախորդ տարիների համեմատ ընդամենը 0.04 և 0.14 միավորներով համապատասխանաբար։

Թիվ	Շրջանավարտների.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
9	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	4.30	4.41	4.21	**4.12**
10	աշխատանքային	4.20	4.43	4.20	**4.13**

	պատասխանատվությունը				
11	թիմային աշխատանք կատարելու ունակությունները	4.10	4.11	4.01	**3.97**

Այս արդյունքները վկայում են, որ մեր գործատուներն ընդհանուր առմամբ բավարարված են մեր շրջանավարտների մարդկային և անձնային նշված որակներից և դա արտահայտել են հիմնականում 4 և 5 գնահատականներով: Ընդհանուր առմամբ գործատուները բավարարված են գործնական միջավայրում մեր շրջանավարտների վարվեցողության և էթիկայի նորմերին հետևելու ունակություններից, բայց նախորդ տարիների համեմատ միջին գնահատականը 0.09 միավորով նվազել է:

Հետևաբար, առաջարկում ենք, որ դասախոսները անցնեն ուսանողակենտրոն ուսուցման, ուսումնառությունը կազմակերպեն խնդիրների, նախագծերի և թիմային աշխատանքների վրա, ուսանողներին դարձնեն ուսումնական գործընթացի հիմնական դերակատար՝ իր տեսակետներով և լուծումներով, նրա մոտ զարգացնեն առաջնորդելու, ղեկավարելու և պատասխանատվություն կրելու ունակություններ:



Այս տարվա հարցումների արդյունքում մեր շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունների միջին գնահատականը աճել է՝ հասնելով 4.09-ի: Բոլոր կրթական ծրագրերով նրանք գործնականում, Մասնաճյուղի ժամանակակից համակարգիչներով սրահներում ծանոթանում և կիրառում են տեղեկատվական շատ ծրագրեր, ձեռք են բերում համացանցում աշխատելու, մասնագիտական հարթակներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու հմտություններ: Արդյունքը ընդհանուր առմամբ

դրական է, սակայն պետք է ուշադրություն դարձնենք ուսանողների գործնականում ձեռք բերած գիտելիքը կիրառելու վրա և ուսումնասիրել կոնկրետ կազմակերպությունների պահանջները ։

Սա նշանակում է, որ Մասնաճյուղի Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը պետք է ուսումնասիրի մարզի գործատուների պահանջները և վերանայի համապատասխան դասընթացի ծրագիրը, նաև ամբողջ ուսումնառության ընթացքում, բոլոր դասավանդողները պետք է յուրովի նպաստեն ուսանողների մոտ այդ հմտությունների զարգացմանը՝ հաշվի առնելով իրենց մասնագիտական ոլորտի պահանջները։



Ակնհայտ է, որ նշված կարողությունները ուսանողի մոտ կզարգանան, եթե նրա մոտ կա ինքնազարգացման ձգտում, և այն դրսևորվում է նաև մասնագիտական գործունեության ընթացքում։ Նշենք, որ այս հարցում նախորդ տարիների համեմատ գրանցվել է աճ և միջին գնահատականը կազմել է 4.02 միավոր, որը վատ արդյունք չէ։ Հարցման մասնակիցներից 52-ը (71,2%-ը) մեր շրջանավարտների ինքնազարգացման ձգտումը գնահատել է 4 և 5 գնահատականներով։

Այս հարցման շրջանակներում ուսումնասիրել ենք նաև մարզի գործատուների կարծիքները Մասնաճյուղի հեղինակության վերաբերյալ իրենց կազմակերպությունում և ընդհանրապես տարածաշրջանում։ Այդ հեղինակությունը ստեղծում է և՛ Մասնաճյուղը, և՛ շրջանավարտներն իրենց գործունեությամբ։



Հարցմանը մասնակից 73 գործատուներից 63-ը (86,3%-ը) իրենց կազմակերպությունում մասնաճյուղի հեղինակությունը գնահատել է 4 և 5 գնահատականներով: Նշենք, որ այդ ցուցանիշը վերջի տարվա համեմատ աճել է:

Այն հարցին, թե խորհուրդ կտան մեր շահակիցներն իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ, դրական է պատասխանել հարցման մասնակիցներից 67-ը (91,8%-ը), այս ցուցանիշը աճել է նախորդ տարիների համեմատ, ինչը բավականին լավ արդյունք է:



Այս հարցման փորձել ենք պարզել, թե տարածաշրջանում ինչ մասնագետների կարիք կա, և ինչ նոր մասնագիտություններով ուսումնառություն են առաջարկում իրականացնել Մասնաճյուղում: Նշենք, որ առաջարկվող մասնագիտությունների ցանկը նախորդ ուսումնասիրության արդյունքներից շատ չի տարբերվում, ինչը վկայում է, որ տարածաշրջանում, իսկապես, նշված մասնագետների կարիք կա: Այդ ցանկը ներկայացված է աղյուսակում:

ԹԻՎ	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔԱՆԱԿ		
		2020	2021	2022
1.	Ագրո մասնագետներ / գյուղատնտես, սննդի տեխնոլոգ, անասնաբուժ/, գյուղատնտեսությանը վերաբերող մասնագիտություններ	4	3	5
2.	Լրագրություն, PR	2	2	2
3.	Մարդկային ռեսուրսների կառավարում	2		1
4.	Մարքեթինգ, բիզնես ոլորտ	1	1	4
5.	Ծրագրավորում, SS ոլորտի ցանկացած մասնագիտություն, վեբ ծրագրավորում, բարձր տեխնոլոգիաների ուսուցում,	5	3	3
6.	Ռուսաց լեզվի ուսուցիչ, բացել նաև ռուսաց լեզվի մագիստրատուրա, ռուսաց լեզվի մասնագիտության հեռակա բաժին	5	6	2
7.	Գերմաներեն լեզվի ուսուցիչ	1	2	1
8.	Կենսաբանության ուսուցիչ	4	2	9
9.	Աշխարհագրության ուսուցիչ	3	2	6
10.	Քիմիայի ուսուցիչ	4	7	10
11.	Ֆիզիկայի ուսուցիչ, էլեկտրոտեխնիկայի մասնագետ		2	1
12.	Նախնական զինվորական պատրաստության ուսուցիչ	2	3	3
13.	Տեխնոլոգիայի ուսուցիչ, կերպարվեստի ուսուցիչ	2	3	3
14.	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	3	2	2
15.	Իրավաբանություն, իրավագիտություն, իրավունքի տեսություն / բացել իրավաբանակն ֆակուլտետ	8	7	8
16.	Մշակույթ, արվեստ, արհեստագործություն, ոսկերչություն	3		1
17.	Մագիստրոսական կրթության ընդլայնում	2		3
18.	Ինֆորմատիկայի ուսուցիչ			2
19.	Ազգային երգ, պար			2
20.	Սոցիոլոգիա			2
21.	Հանրային կառավարում			2

22.	Բժշկություն			**2**
23.	Բնագիտության ուսուցիչ			**1**
24.	Արևելագիտություն			**1**
25.	Քաղաքագիտություն			**1**
26.	Ռոբոտաշինություն			**1**
27.	Ճարտարապետություն			**2**

Նշվածներից երևում է, որ տարածաշրջանում շատ է բնագիտական առարկաների՝ քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի ուսուցիչների, ինչպես նաև աշխարհագրության ուսուցչի պահանջը, շահակիցների կողմից մշտապես բարձրաձայնվում է նախնական զինվորական պատրաստության ուսուցիչներ պատրաստելու հարցը, նաև SS ոլորտի ժամանակակից մասնագիտությունների իրականացումը: Հարցումից եզրակացնում ենք, որ իրավաբանության և իրավագիտության պահանջարկը ևս բարձր է:

Այժմ անդրադառնանք հարցման շրջանակներում բաց հարցերի միջոցով Մասնաճյուղի շրջանավարտներին վերաբերյալ շահակիցների կարծիքների ուսումնասիրությանը: Մասնավորապես, նրանց առաջարկվել է նշել, թե աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն են կարևորում և մեր շրջանավարտների ուժեղ և թույլ կողմերը:

«***Աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն եք կարևորում»*** հարցին շահակիցների մեծ մասը պատասխանել են, որ կարևորում են գիտելիքներն ու տեսական և գործնական հմտությունները, մասնագիտական պատրաստվածությունը, հաղորդակցվելու կարողությունները, մարդկային որակը: Պատասխանատվությունը, սովորելու և կատարելագործվելու ձգտումը, պարտաճանաչության զգացումը, վարվեցողությունը, մանկավարժական կարողությունները, արագ կողմնորոշվելու և արագ նորը սովորելու կարողությունը, բացի այդ կարևորում են թիմում աշխատելու հմտությունները, պատասխանատվության զգացումը և զարգանալու ձգտումը, մասնագիտական գիտելիքները և մարդկային արժեքները, աշխատասիրությունը, պատասխանատու վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ, գիտելիքների պաշարը, ինքնակրթվելու

պատրաստակամությունը, խոսքը, ներկայանալու հմտությունները, գործնական գիտելիքները և շփման հմտությունները:

«Խնդրում ենք նշել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների երեք ուժեղ կողմերը» հարցի համար ստացել ենք հետևյալ պատասխանները.

- գիտելիքների բազա, սովորելու ձգտում, դիպլոմ,
- մասնագիտական հմտությունները, արագ կողմնորոշման և նոր տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունները,
- պատրաստվածություն, խոսքի զարգացում, թիմայինն աշխատանք,
- պատասխանատվություն մասնագիտության նկատմամբ, տեսական գիտելիքներ, սովորելու ցանկություն,
- հաղորդակցվելու կարողությունները տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություններ մասնագիտական պատրաստվածությունը,
- վարվեցողություն,աշխատասիրություն,ակտիվություն,
- մասնագիտական գիտելիքներ, զսպվածություն, պատրաստակամություն,
- աշխատանքային կարգապահություն, թիմային համագործակցություն, մոտիվացնելու ունակություն,
- համարձակությունը, նոր տեխնոլոգիաներին տիրապետումը, փոփոխություններին հեշտ հարմարվելը,
- մասնագիտական գիտելիքներ, աշակերտների հետ աշխատելու գերազանց հմտություններ, ժամանակի ճիշտ կառավարում,
- ինքնավստահությունը, շփման մեջ ազատությունը, ՏՀՏ-ի լավ տիրապետելը,
- խելացի, պատասխանատու, համագործակցող:

«***Խնդրում ենք նշել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների երեք թույլ կողմերը»*** հարցին շահակիցների մեծ մասը նշել է գործնական հմտությունների պակասը, ինքնակատարելագործման ձգտումը, ՏՀՏ-ին տիրապետելու թույլ հմտությունները, քննադատական-վերլուծական կարողությունները, աշխատանքային փորձի

պակասը, պասիվ նախաձեռնողականությունը, մասնագիտական գիտելիքների պակասը, մասնագիտական և անձնային աճի համար թույլ նախաձեռնողականությունը, հասարակական պասիվությունը, թույլ զարգացած խոսքը և միտքը:

Շահակիցների անկեղծ և ճիշտ պատասխաններն օգնում են մեզ ավելի շատ ուշադրություն դարձնել շրջանավարտների մասնագիտական որակների բարելավման հարցում:

<u>Ելնելով վերոնշյալ խնդիրներից առաջարկվում է.</u>

- Հարցման արդյունքների մասին իրազեկել մասնաճյուղի դասախոսական և ուսանողական կազմին, քննության առարկա դարձնելով կրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված ներկա գործընթացներում արտաքին շահակիցների առաջարկները և կարծիք-գնահատականները:
- Ուսումնամեթոդական վարչության, համապատասխան մասնագիտությունների պատասխանատուների հետ քննարկել կրթական ծրագրերում այնպիսի թեմաների կամ լրացուցիչ դասընթացների ներմուծումը, որոնց դասավանդումը հնարավորինս կապահովի շրջանավարտների մասնագիտական ու անձնային որակների զարգացումը, որը ժամանակակից աշխարհում կբավարարի գործատուների պահանջներին:
- Ստեղծել հանձնաժողով, որի շնորհիվ հաճախ հանդիպում-քննարկումներ կկազմակերպվեն առաջ եկած խնդիրների համար լուծման եղանակներ առաջարկելու նպատակով:
- Կազմակերպել քննարկում ՌԾ-ով համագործակից ստորաբաժանումների հետ (ՈՒՄՎ, ՄԿՈԱ, Կրթական ծրագրերի պատասխանատու, ՈԻԽ, ֆակուլտետներ): Ներկայացնել առաջարկներ, մշակել նոր մեթոդներ, որոնք հնարավորություն կտան առավել զարգացնել ուսումնական գործընթացը և առավել համապատասխանեցնել ժամանակի պահանջներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2022-2023 ուս.տարի I կիսամյակ

Առաջադիմությունը

25/11/2022

ընք.քնն.1

N:	Առարկայի անունը	Ուս.քանակը		Միջին գնահ.		0-ների քանակը		2,3-ների քան.		4,5-երի քան.	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.
	Դիզայն (գեղար)										
	Կուրս Դ II										
1	Գծանկարչություն-3	6	3	3.00	3.00			5	3	1	
2	Գունանկարչություն-3	6	3	4.50	5.00			1		5	3
	Կուրս Դ III										
1	Գծանկարչություն -5	12	4	4.00	4.75			3		9	3
2	Դիզայն նախագծում-1	12	4	2.58	3.75			1		6	3
	Կուրս ԴIV										
1	Հագուստի մոդել.կոմպոզիցիա-3	9	2	4.00	5.00			3		6	2
2	Հագուստի նախագծում-3	9	2	2.89	5.00			5		3	2
	Ընդամենը՝ Դիզայն (գեղար)			*3.44*	*4.33*						
	Կիրառական արվեստ										
	Կուրս ԿԱ IV										
1	Աշխատանք նյութի վրա-6	8	3	4.00	5.00	1				7	3
	Կուրս ԿԱII										
1	Գծանկարչություն-3	8	3	4.00	5.00	1				7	3
2	Գունանկարչություն-3	8	3	4.00	5.00	1				7	3
3	Նյութերի տեխնոլոգիա-1	8	3								
4	Գործ. Գեղ.ձևավորում-2	8	3	3.75	4.67	1		2		5	2
	Կուրս ԿԱIII										
1	Գծանկարչություն-5	9	1	4.22	5.00			2		7	1
2	Փարոի գեղ. մշակում-2	9	1	4.00	5.00			2		7	1
3	Գործ.գեղ.ձևավորում-3	9	1	3.56	4.00	1				7	1
	Ընդամենը՝ Կիրառական արվե			*3.46*	*4.06*						
	Ընդամենը ֆակուլտետում՝			3.45	4.19						

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան